



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



76

2

L-85

my. 26

2010

# ԼՍԱՐԱՆ

ԿԵՆՑԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՅ

Ա.

Պ ԱՏՄ ՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԳԱՍ ՈՒԹԵՐՈՐԴ



ԻԹԷՆԴՈՄԻԱ

Իսպարսանի Խաշիպեան Ուսումնարանի Հայոց

—  
1861.



# Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

## Ա Ս Տ ՈՒ Ա Ծ Ա Շ ՈՒ Ն Զ Ս ՈՒ Ր Ք Գ Ր Ո Ց

Գ Ա Ս ՈՒ Թ Ե Ր Ո Ր Գ .



ստուածաշունչ սուրբ զբոց պատմութիւններուն մէջ ամենէն սրտաշարժը, եւ թէ՛ ծնողաց, թէ՛ որդւոց եւ թէ՛ եղբարց շատ խրատ առնելու պատմութիւնը Յովսէփ նահապետին պատմութիւնն է: Ասոր մէջ յայտնի կերեւնայ մարդկային կրից ամենէն փափուկներուն ու ամենէն կատաղիներուն ոյժը՝ ազդեցութիւնը, Աստուծոյ նախախնամութեան մասնաւոր կերպով արդարներուն վրայ աչք ունենալը, աստուծային արդարութեան շուտ կամ ուշ անպատճառ կատարուիլը, եւ մարդկային անմեղութեան յաղթող գտնուիլը նախանձու, ջարախօսութեան, հալածանաց եւ ամէն տեսակ հակառակութեան վրայ: Ուստի կ'ինդրեմ, պատուական ժողովականք, որ ձեր բարեսէր մտադրութիւնը աւելի ալ սրէք այս պատմութիւնս մտիկ ընելու:

Յակոբ նահապետին գործերը յաջող գնացին ամէն կողմանէ մինչեւ որ իւր 12 կտրիճ զակերներովն ու բազմամիւ ծառաներովը, աղախիններովն ու հարստութեամբը եկաւ տեղաւորուեցաւ իրեն հայրենի երկրին մէջ: Ռաքէլի մահը մեծ տըրտմութիւն տուաւ իւր բարի սրտին. բայց մխիթարանքն ալ ասով աւելի եղաւ որ անկից մնացած երկու որդիքը, Յովսէփ եւ Բենիամին, իրենց միւս եղբայրներէն ալ աւելի բարեսիրտ, բարեբարոյ ու ծնողասէր էին: Այն երկուքին մէջ ալ Յակոբ աւելի սէր մը ունէր Յովսէփայ վրայ, անտարակոյս անոր գովելի յատկութիւններուն համար. ուստի եւ իրաւունք ունէր սիրելուն. բայց իրաւունք չունէր այն աւելի սէրը դրսէն ալ աչքի զարնող կերպով ցուցնելու. ապա թէ՛ ոչ, հարկաւ իւր սիրելի որդւոյն վնաս պիտի լինէր թէ՛ իրեն եւ թէ՛ անոր՝ միւս եղբարցը նախանձը անոր վրայ շարժելէն:

Յովսեփայ եղբայրներուն արուեստը կամ զբաղմունքը իրենց հօրը պէս երկրագործութիւն՝ այսինքն գետին բանիլ, ու հովուութիւն (չօպանութիւն) ընել էր. ուստի գրեթէ բոլոր օրը դուրսը կանցընէին. իսկ Յովսեփ տունը կկենար իւր հօրը քով. ուստի եւ անոնց չափ չարքաշուութիւն ընելու պատճառ չունենալով՝ իհարկէ նոցա աչքին գէշ կերելնար: Այս բաւական չէր. Յակոբ ելաւ Յովսեփայ կապայ մըն ալ շինեց հագուց որ ծաղկեայ կամ գոյնզգոյն (չիչէքի) լաթէ էր՝ տունը նստող մարդու յարմար: Պզտիկ ու ոչինչ զանազանութիւն՝ Յակոբայ համար, որ որդւոյն վրայ ունեցած սիրոյն նայելով՝ այն նշանը փոքրիկ բանի տեղ կդնէր. բայց նախանձոտին համար մի՞թէ պզտիկ բան կայ. ամէն բան մեծ, ամէն բան խոշոր կերելնայ այն մարդուն որ նախանձու խոշորացուցովը կնայի չորս դին: Յովսեփայ եղբայրները առանց պաղուծեան կամ նաեւ ատելութեան եւ բարկութեան չէին կրնար խօսիլ, հետը թէպէտ եւ նա՛ թերեւս անմեղ պարզմտութեամբ՝ չէր իմանար նոցա պաղուծեան պատճառը:

Պարզամիտ եղածն աւելի ալ յայտնի ըրաւ Յովսեփ օր մը, որ ելաւ իւր տեսած մէկ երազը պատմեց բոլոր եղբայրներուն առջեւ. «Իաշտի մը մէջ ամէնքս մէկտեղ՝ կտրուած ցորենները որայ որայ (տէմէթ՝ կամ քիւթէ քիւթէ) կկապէինք. յանկարծ իմ կապած որաս ելաւ շիտակ կայնեցաւ, ու ձեր որաները անոր առջեւն ընկան՝ երկրպագութիւն ընելու պէս ծոցեցան»: Մէկէնիմէկ հասկըցան եղբայրները այն երազին միտքը. սաստիկ բարկութեամբ կանչեցին վրան թէ «Ի՞նչ ըսել կուզես ատով. մի՞թէ մեր վրայ թագաւո՞ր լինել է միտքը»:

Յովսեփ անմեղ՝ չխրատուեցաւ անով, որովհետեւ պատմածը սուտ չէր. միտքը դրած լինելով անշուշտ որ մէկը շիտակ բան կամ ճշմարտութիւն ըսելէն ետեւ՝ կարող է ու պէտք է որ ե՛րբ լինի, որոյ առջեւն ալ լինի՝ ըսէ: Ելաւ քանի մը օրէն ուրիշ երազ մ՝ալ պատմեց հօրն ու եղբարը առջեւ: «Երազ մը տեսայ որ արեւը, լուսինն ու 11 աստղ առջեւս ընկած երկրպագութիւն կընէին»: Յակոբ նահապետ միւս որդւոցը բարկութեան առաջքը առնելու կերպով աճապարեց՝ ըսաւ անոր թէ «Այդ ալ պատմելու երա՞զ է. ի՞նչ. մի՞թէ ես ու մայրդ ու եղբայրներդ քեզի երկրպագութիւն պիտի ընեմք»:

Եւ թէպէտ դրսէն Յակոբ այս շինծու յանդիմանութիւնը տուաւ Յովսեփայ, որ եղբայրներուն ատելութիւնը չսաստկանայ անոր դէմ, բայց հասկըցաւ որ այն երկու երազներն ալ կտր-



հուրդ մը ունին. ատեն պիտի գայ որ պիտի կատարուին, որո՞վքե՞տե՞ս անլի աստուածային յայտնութեան կերպ մը ունին՝ քան թէ հասարակ երազի:

Սեք երազներու վրայ անցած դասերէն մէկուն մէջ խօսեցանք, եւ այս ալ ըսինք թէ՝ Յշմարիտ երազը կամ տեսիլքը սուա ու խաբէական երեւութէն ի՛նչ տարբերութիւն (Ֆարդ) ունի: Հոս այսքանը միայն նորէն յիշեմք որ երբ երազ մը պայծառ կերպով ու որոշ պարագաներով կերեւնայ, եւ մանաւանդ յետոյ՝ շուտով կամ ուշ՝ իրօք ալ կելլէ կկատարուի, այն երազին հաւատալը ոչ խելքի դէմ է եւ ոչ հաւատքի: Իսկ երբ երազը անյարմար, այլանդակ, խառնափնդոր ու կարգէ՛դուրս պարագաներով շաղուած երեւոյթ մըն է, անոր հաւատալը իհարկէ անմտութիւն է, եւ յոյսը այնպիսի երազներու վրայ դրնելով գործ տեսները Աստուծոյ հրամաններուն ալ հակառակ է: Թէ որ երազիդ մէջ սրտիդ ուզածը, խղճմտանքիդ զարկածը, խառնուածքիդ կամ բնաւորութեանդ հետեւանքը տեսնես կցկտուր կամ անորոշ ու անյարմար պարագաներով, ամենեւին պէտք չէ հաւատաս որ անոնք քեզի գլխուդ գալիքը կցուցնեն. եւ երազներուն խիստ շատը այսպէս են: Հազարին մէկը հազիւ կլինի որ նշանակութիւն մը կարենայ ունենալ, այնպէս որ անոր հաւատալը ոչ ամօժ տեսլի եւ ոչ մեղք. բայց անոր ալ տեսիլք կամ խոհրդաւոր երազ եղածը այն ատեն միայն հասկըցիր, երբոր իրօք կատարուի:

Յովսէփայ եղբայրները այն օրերը հեռու մէկ տեղ մը գնացած էին իրենց ոչխարները արծեցընելու: Երբոր շատ ուշացան տուն դառնալու, Յակոբ ըսաւ Յովսէփայ թէ «նորեակ, գնա նայէ՛ եղբայրներդ ո՛ւր են, ի՛նչպէս են, ի՛նչ կընեն. ինձի լուր մը բեր»: Գուցէ մէկ միտքն ալ այս էր որ Յովսէփայն ծառայութիւնն ընելով իւր եղբարցը՝ կերպով մը սրտերն առնու, աչքերնին մտնէ:

Ելաւ գնաց Յովսէփ, ու շատ քալելով՝ հազիւ գտաւ զանոնք Գովթայի մ ըսուած դաշտին մէջ: Եղբայրները արդէն Յովսէփայ վրայ բամբասանք ընելով մինչեւ այն ատեն՝ մէկմէկու վիտքը տաքցուցեր էին: Բամբասանքի չար սովորութեան վարժած անձինք աղէկ գիտեն թէ ի՛նչպէս կլինի որ երբ մէջերնէն մէկը կամ մէկալը կելլէ չարախօսութիւն մը կծգէ մէջտեղը, կրակ մըն է կվառէ ընկերութեան մէջ, ուրիշներն ալ իրենց սրտին չարութեանը կամ լսելիին կարծութեանը համեմատ կերպով մը կփրջեն կբորբորեն այն կրակն ու այն ատեփ-

ճանի կհասցընեն որ յետոյ մարել անցընել ալ ուզեն՝ չեն կրնար. տներ, խանութներ, ամբողջ քաղաքներ կայրին կփրճանան, անմեղ արիւններ հեղեղի պէս կվազեն, անարատ անուններ կսենան կապականին, ազգական՝ բարեկամ, բարերար, արդար, ամէնքն ալ կմոռցուին, ամէնքն ալ թշնամի կերեւնան. ամէն տուն դժոխք կդառնայ, ամէն մարդ սեւ սատանայ. հրեշտակները կփախչին կամ կտրտմին, սատանաները կժողվին ու ծափ կզարնեն որ իրենց բնակարանին պէս, այսինքն դժոխքին նման՝ տներ ու սրտեր ունին. այնպիսի բերաններ որ մեծի պզտիկի դէմ չէ միայն, մինչեւ Աստուծոյ դէմ ալ կբացուին. այնպիսի լեզուներ որ կարենան նէ բոլոր աշխարհս ալ իրենց թունովը (զէհիրովը) կապականեն, Դաւիթ մարգարէին ըսածին պէս. «եղին յերկինս զբերանս իւրեանց, եւ զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ. — իրենց բերանները բացին մինչեւ երկինք հասուցին, ու լեզուներովը բոլոր աշխարհիս երեսը լեցին»:

Յովսեփայ եղբայրները տեսան հեռուէն նորա եկածը. իրենց ատելութեանն ու նախանձուն ուժէն աչքերուն զօրքը այլայլած, եղբայր չէր տեսածները՝ ցուցանք էր. կամ թէ աւելի լաւ ըսեմք՝ իրենք մէյմէկ ցուցանք էին դարձած: Աչքի լոյս տուին մէկմէկու. «Ահա մեր երազ տեսնողը ելեր է հոս կուգայ ըսին. արիք սըւոր կեանքը վերցնեմք աշխարհէս, տեսնեմք իրեն երազները ի՞նչպէս պիտի ելլեն: — Ի՞նչպէս ընեմք: — Ջարնեմք մեռցընեմք ու մարմինը այս դաշտին մէջի խորունկ գուբերէն մէկուն մէջ նետեմք. յետոյ ձայն կհանեմք թէ վայրի (եապանի) գազանները պատուտած կլինին զինքը»:

Ռուբէն, որ մէջերնին ամենէն մեծն էր, աւելի գթած գտնուեցաւ, կամ թէ Աստուած սիրօր կակըղցուց, միտքը լուսաւորեց, — ինչպէս որ կհաւատամք թէ շատ անգամ Աստուած մեծերուն ու մեծաւորներուն մտքին լոյս կուտայ որ արդար դատաստան կտրեն. — դարձաւ ըսաւ մէկալներուն թէ «Ձէ, եղբայրներ, այդ խեղճ տղուն արիւնը մտնելէն ի՞նչ պիտի վաստըկիմք. մեք մեր ձեռքովն ինչո՞ւ զինքը սպաննեմք. այս անապատին մէջ քանի՞ հատ ցամաք հորեր կան, առնումք զինքը անոնց մէկուն մէջ ձգեմք, թող երթայ ինքն իրեն մեռնի»: Ռուբէնին միտքը այն էր, կըսէ սուրբ գիրքը, որ ետքը հանէ անկից եղբայրն ու հօրը ձեռքը հասցընէ: Աղէկ որ մէկալներն ալ հաւանեցան անոր տուած խորհրդին:

Յովսեփ քովերնին հասած չհասած, անուշ ու շնորհալի

կերպարանքովը եղբարցը բարեւ տալուն ու առողջութիւնը հարցնելուն չմնաց, Թափեցան նոքա վրան՝ աչքերնին պատրուտելով ու ակռանին կրճտելով՝ ինչպէս կատաղի գայլեր անմեղ գառի մը վրայ. քաշեցին հանեցին կռնըկէն այն ծաղկեայ պատմութեանն որ աչքերուն փուշ եղած էր. տարին ձգեցին զինքը խորունկ հորի մը մէջ, ու իրենք դարձան տեղերնին նստան որ հաց ուտեն: Անմեղ եղբայրնին այն սոսկալի գուրբին մէջ՝ ողջ ողջ գերեզման ձգուածի պէս՝ իրեն արտասունքը ծծելով, իրեն սիրելի ծերունի հայրը յիշելով, անոր քաշելու կսկիծը մտածելով, սրտին ցաւէն կրնար հոն մէկէն մեռնիլ՝ ուրուրին ճանկն ընկած անմեղ ձագի մը պէս. բայց արդարոց Աստուածը Յովսէփայ հետն էր, եւ Աստուծոյ հրեշտակը զնա կմխիթարէր, ինչպէս որ եղբարցը սիրտն ալ այն միջոցին դժոխային խռովութեամբ ու անպատմելի դառնութեամբ լցուած էր: Նոցա կերածը հաց չէր, հող ու մոխիր էր. խմածը ջուր չէր, քացախ ու լեղի:

Մէյմալ աչքերնին վերուցին տեսան որ անդիէն Իսմայէլացի ճամբորդներ կամ վաճառականներ կուգան ուղտերով, որ ագնիւ խնկեղէն կտանէին եգիպտոս ծախելու: Մէջերնէն Յուդան, որոյ խղճմտանքը գուցէ աւելի սաստիկ կզարնէր անմեղ եղբորը գլխուն բերածներուն վրայ, դարձաւ ըսաւ մէկալներուն թէ «Մեր եղբայրը մեռցնելէն ու անոր արիւնը մտնելէն ի՞նչ կվաստըկիմք. եկէք նա Իսմայէլացիներուն ծախեմք զինքը. ի՞նչ ալ լինի՝ մեր եղբայրն է, մեղք է խեղճին»:

Ամենուն խղճմտանքին ալ յարմար եկաւ այս խորհուրդը. գնացին հանեցին Յովսէփը գուրբէն ու բերին Իսմայէլացիներուն քսան դափեկանի ծախեցին՝ իբր թէ իրենց ծառան կամ գերին (եսիրն) է: Յայտնի բան է որ կրնար Յովսէփ ըսել այն մարդիկներուն թէ «ես սոցա եղբայրն եմ. անիրաւ տեղը զիս ձեզի ծախել կուզեն». բայց ձայն չհանեց. մէյմը անոր համար որ նոցա բարկութիւնը աւելի չգրգռէ իրեն դէմ, մէյմ՝ալ որ յոյս ունէր անշուշտ թէ Իսմայէլացիք զինքը կտանին եգիպտոս աղէկ մարդու մը կծախեն, ինքն ալ կհասկըցնէ անոր իրեն գլխուն եկած փորձանքն ու կազատի կհասնի մէկ օր մը իւր սիրելի հօրը քովը:

Այն միջոցին որ Յովսէփայ միւս եղբայրները իրենց ոչխարները հոգալու կամ քշելու հետ էին, Ռուբէն ուրիշ ճամբով մը երթայ գուրբ՝ տեսնէ որ Յովսէփ հոն չէ: Իսկոյն կարծիքի գնաց որ անոնք գնացեր հաներ են եղբայրնին ու մեռուցեր

են. վազեց շփոթուած՝ եղբայրներուն քովը. «Տղան հոն չէ՛ կանչուըռտեց. հիմա ես ո՛ւր պիտի երթամ. խեղճ հօրս աչքին ի՞նչպէս պիտի երեւնամ. ի՞նչ ըրիք տղուն» ըսաւ ու սկսաւ լալ ու ծեծկուիլ:

Եփոթեցան մէկալներն ալ. պատմեցին Իսմայէլացւոց ծախածները, եւ խեղճ հայրերնին մխիթարելով՝ մանաւանդ թէ խաբելու ճարը մտածելով՝ առին մէկ այծու ձագ մը մորթեցին, Յովսեփայ պատմուհանը՝ այսինքն կապան անոր արեանը մէջ թափեցին ու ղրկեցին իրենց հօրը. «Այս պատմուհանը ղաշտին մէջ գտանք ըսին. նայէ՛ քու որդւոյդ պատմուհա՞նն է թէ չէ»: Ի՞նչ սոսկալի անգեթուծիւն, ի՞նչ գազանական նախանձ եւ ատելութիւն:

Ճանչցաւ Յակոբ իւր սիրելի որդւոյն պատմուհանը. — ի՞նչպէս ջհանջնար. — մանաւանդ որ Յովսեփայ արդէն ուշացածին համար սիրտը մեծ անհանգստութեան մէջ էր. «Վախ, ըսաւ, այս իմ զաւակիս կապան է. չար գազանին մէկը կերեր է Յովսէփս, չար գազանը պատուեր է Յովսէփս. — Պատմուհանս որդւոյ իմոյ է. գազան չար եկեր զնա. գազան յափշտակեաց զՅովսէփ»: Այս ըսելով պատուեց իրեն վրայի հագուստը, որ մեծ սուգի ու տրտմութեան նշան էր, ու անոր տեղը քուրձ՝ այսինքն խաբար, ձիու մազէ հիւսած հաստ կապայ մը հագաւ: Իլուխը ժողովեցան որդիքն ու աղջիկները, շատ աշխատեցան որ մխիթարեն հայրերնին, բայց ճար չեղաւ. աղբիւրի պէս կվազցընէր աչքերէն արտսունքն ու կըսէր. «Թողէք որ ես ալ այս սուգովս գերեզման իջնամ, որդւոյս քովն երթամ. — Իջից ես սովին սգով առ որդին իմ իրժոխս»:

Յակոբ նահապետին այսպէս անմխիթար սգով ողբ ընելուն պատճառը՝ միայն Յովսեփայ վրայ ունեցած սէրը չէր. հապառակի այն կսկիծն էր որ հասկըցաւ անտարակոյս թէ չար նախանձն էր իւր զաւակին մեռցընողը, նախանձու գազանն էր զնա պատուողը, եւ ինքն եղած էր կերպով մը այն գազանին սնունդ տուողը մեծցընողը: Այս բանը աղէկ կհասկընան այն սգաւորներն որ իրենց մէկ սիրելի անձը կամ սիրած բանը կկորսընեն. շատ անգամ իրենց ողբ ու լացին սաստկուածիւնը ոչ այնչափ մարդուն կամ այն բանին կորսուելուն վրայ կլինի, որչափ՝ անոր համար որ մէկ կերպով կամ մէկալ կերպով իրենք եղած են այն կորստեանը պատճառ. կամ թէ անոնց կորսուելէն առաջ յարգերնին (խըլմէծնին) չեն ճանչցած:

Թողումք Յակորբը իրեն տրտմութեանն ու նորա որդիքը իրենց խղճմտանքին զարնելուն չարչարանքին մէջ, ու մեք տեսնեմք Յովսէփայ գլխուն եկածները: Դժբանքս, մայր դո ցմաջ համայէլացիները աժան գներ էին Յովսէփը. սուղ սուղ ծախեցին հարուստ իշխանի մը, որ եգիպտոսի (Մարրի) Փարաւոն Թագաւորին պալատին մէջի մեծամեծներէն մէկն էր, եւ միանգամայն դահճապետ, այսինքն դահիճներու գլուխ ու բանտերու գլխաւոր վերականու, անունն ալ Պետափրէս: Սա տեսաւ որ Յովսէփ հաւատարիմ, աչքաբաց, շնորհալի, ամէն բանի յարմար, ամէն կողմանէ սիրելի տղայ մըն է: մեծ բարեբաղդութիւն գեպեց իրեն այնպիսի սպասաւոր ունենալը: Իւր գործերուն կարգէ դուրս յաջողութիւնն ալ տեսնելով՝ միտքը դրաւ որ Յովսէփայ ոտքը բարեյաջող էր իրեն համար. վրան մեծ սէր մը ձգեց ու բոլոր իւր տանը կառավարութիւնը անոր ձեռքը յանձնեց. այնպէս որ ինքը միայն իւր առջեւը դրուած հացը գիտէր, ուրիշ բանի չէր խառնուեր, կըսէ սուրբ գիրքը: Յովսէփ ալ իւր կողմանէ տեսնելով տիրոջը իւր վրայ ունեցած անչափ վստահութիւնը, օրէ օր հաւատարմութիւնն աւելցոց, որպէս զի ցուցնէ գործով որ տէրը խաբուած չէ, իրատունք ունի՝ այնքան վստահ լինելու իւր վրայ: Դժբանքս Դժբանքս

Բայց Պետափրէսի կինը շատ հեռու էր Յովսէփայ հաւատարմութենէն ու առաքինութենէն: Այնպիսի կերպով մը ուզեց Յովսէփը գլխէ հանել մոլորցընել որ անոր բոլոր աղէկութիւնները, հաւատարմութիւնը, աշխատանքը պարապ հանել պիտի տար: Բայց այն Աստուածն որ իւր եղբարցը ձեռքէն ու հորին մէջը քաղցած մեռնելու վտանգէն ազատեւ էր ճովսէփ, անոր հետն էր նաեւ այն փորձանքին ատենը: Տիրոջը իւր վրայ դրած բոլոր վստահութիւնը մէկ կողմէն, իրեն ալ աստուածավախ խղճմտանքաւորութիւնը մէկալ կողմէն, այնպիսի ոյժ մը տուին իրեն որ անզգամ կնիկմարդուն հրապուրանացը դիւրաւ յաղթեց, ու վրայի լաժը ձգեց՝ դուրս ելաւ քովէն:

Ազազակեց կանչուըռտեց կնիկմարդը կատարի գազանի մը պէս, ու բոլոր տանը մարդիկը վագեցին գլուխը ժողվուեցան. զրպարտեց ճովսէփ: Պետափրէս տուն որ դարձաւ, եւս առաւել կատաղութիւնը սաստկացուց, ու Յովսէփայ վերարկուն ցուցընելով՝ «Կտեսնե՞ս, ըսաւ, սա եբրայեցի ծառայիւր ըրածը, ձայնս վրան բարձրացուցածիս պէս՝ հագուստը վրաս նետեց ու ձգեց դուրս փախաւ. ծառայ չբերիւր ուրեմն զինքը ինձի, հապա զիս ծաղր ընող՝ պատիւս ոտքի տակ առնող մը»:

Վերիվերոյ նայողին այնպէս մը կերեւնայ որ դահիճապետը այն տանուտէրներէն է եղեր որ ծառայի մը վրայ ի՛նչ յանցանք որ լսեն, մանաւանդ իրենց ամուսիններէն, իսկոյն կըհաւատան, ու անխնայ կըատեն կըատապարտեն ծառան: Բայց աւելի հաւանական է որ Պետափրէս գիտնալով որ Յովսէփ անմեղ ալ լինի նէ՛ այնուհետեւ կինը հանգստութիւն պիտի չտայ անոր, տանը մէջէն խռովութեան պատճառը վերցընելու համար առաւ Յովսէփը բանտ դրաւ՝ Թագաւորին դէմ յանցանք ընողներուն քովը: Սուրբ գիրքը չմոռնար այս տեղ ալ ըսելու թէ «Աստուած Յովսէփայ հետն էր. — եւ էր Տէր ընդ նմա». անկից յայտնի է որ բանտապետը՝ այսինքն բանտին վերակացուն մեծ գուժ ու սէր ձգեց Յովսէփայ վրայ, այնպէս որ բոլոր բանտը անոր ձեռքը տուաւ. նա էր ամէն բան կառավարողը, եւ ամէն գործը կ'յաջողէր: — Երբոր Աստուած մէկու մը հետ է, ի՛նչպէս չյաջողին անոր գործերը: Բայց ինքը գուրբի մէջ է եղեր, փորձանքի մէջ է ընկեր, բանտի մէջ է փակուեր, զրպարտուեր է, բամբասուեր է, չարախօսուեր է, նախատուեր է, ծաղր եղեր է, ամենեւին հոգ չէ. մանաւանդ թէ աղէկն ալ այն է, որպէս զի իմացուի թէ այնքան դժուարութեանց մէջ՝ իրեն ձեռք զարկած բանին յաջողութիւն տուողը կոյր բաղձը չէ, Աստուած է:

Վրան տարիներ անցան, Թագաւորին իշխաններէն չորս հոգի յանցանքի մէջ գտնուեցան ու Յովսէփայ ձեռքն եղած բանտը դրուեցան: Այն չորսին մէկը Թագաւորին տակառապետն էր, այսինքն գինիներուն վերակացուն, եւ միւսը մատակարարը, այսինքն սեղանի կամ կերակուրներու վերակացուն. կերեւնայ թէ ամբաստանուած էին որ Թագաւորին կամ պալատականաց թոյն (զէհիր) տալու միտք ունեցեր են: Յանցանքնին ի՛նչ ալ եղած լինի՝ կերելի որ ծանր բան էր. ուստի դահիճապետը ապսպրեց Յովսէփայ որ աղէկ աչք ունենայ անոնց վրայ, բայց պատուով պահէ, լաւ հոգայ:

Տակառապետն ու մատակարարը քանի մը օր բանտը կենալէն ետեւ, երկուքն ալ մէկ գիշերուան մէջ մէկմէկ երազ տեսան: Առաւօտը քովերնին գնաց Յովսէփ, նայեցաւ տեսաւ որ երկուքն ալ շփոթած՝ երեսները կախած նստեր են. հարցուց անոնց թէ «Ի՛նչ է պատճառն որ այսօր աւելի տրտում էք: — Երազ տեսանք ըսին, ու մէկը չկայ որ անոր մեկնութիւնը տայ մեզի»: Մտքերնին դրած էին թէ երազի մեկնութիւն տալը

իրենց իմաստուններուն ու քուրմերուն բանն է. կցաւէին որ բանտին մէջ կարելի չէ իրենց քուրմ մը գտնել ու երազներուն մեկնութիւնն ուզել: Յովսէփ անոնց մտքին սխալը շտկեց ու ըսաւ թէ «երազին մեկնութիւնը գիտնալը Աստուծոյ բանն է. ուրեմն ում որ ուզէ կրնայ տալ երազ մեկնելու կարողութիւնը. պատմեցէք տեսնեմ, ի՞նչ է ձեր տեսած երազը»: Տակառապետը սկսաւ պատմել. «Ինծի այնպէս երեւցաւ որ դիմացս խաղողի որթ (ասմա) մը կար, որթին վրան երեք հատ կանաչ ճիւղ, երեք կուզ ալ հասուն խաղող: Իմ ձեռքս ալ Փարաւոն Թագաւորին գաւաթը կար. խաղողը կառնէի՝ գաւաթին մէջը կքամէի ու Թագաւորին ձեռքը կուտայի»: — Յովսէփի դարձաւ, քու երազիդ մեկնութիւնն այս է ըսաւ. «Երեք ճիւղերը երեք օր է. երեք օրէն Փարաւոն զքեզ նորէն քու առջի պաշտօնիդ ու իշխանութեանդ պիտի հասցընէ, նորէն տակառապետ պիտի լինիս: Կխնդրեմ որ այդ աղէկութեան որ հասնիս՝ զիս ալ չմոռնաս. մեծ ողորմութիւն ըրած կլինիս ինծի թէ որ Փարաւոնին առջեւ խօսք մը բանաս իմ վրաս ու այս բանտէն ազատես զիս. վասն զի ես եբրայեցւոց երկրէն գողցուած խեղճ տղայ մըն եմ, հոս ալ յանցանք մը չեմ ըրած. առին զիս այս բանտին մէջ ձգեցին»:

Մատակարարը տեսաւ որ Յովսէփայ տուած մեկնութիւնը թէ՛ խելքի յարմար է, եւ թէ յաջողութիւն կգուշակէ. շուտ մը ելաւ ինքն ալ իւր տեսած երազը պատմեց. «Իմ երազիս մէջ ալ այնպէս երեւցաւ ինծի որ գլխուս վրայ երեք հատ խան այսինքն ոտքով սինի կամ մեծ թէփ սի ունէի. ամենէն վրայի խանին մէջ ալ Փարաւոնին սիրած կերակուրներուն ամէն տեսակէն կգտնուէր. տեսնեմ որ վերէն Թաշունները կիջնային ու գլխուս վրայի խանին մէջի կերակուրները կուտէին»: Յովսէփ պատասխան տուաւ թէ «Քու երազիդ մեկնութիւնն ալ այս է. երեք խաները երեք օր են. երեք օրէն Փարաւոն քու գլուխդ քեզնէ պիտի առնէ, մարմինդ փայտի վրայ պիտի կախէ, Թըռչուններն ալ պիտի գան ուտեն մարմինդ»: Թէ որ Յովսէփ շողոքորթութիւն ունենար, Տշմարտութիւնը կերպով մը կը ծածկէր, մատակարարին երազին ալ կակուղ կամ տարակուսական մեկնութիւն մը կուտար. կամ թէ, ինչպէս որ ուրիշին անհամ կամ այլանդակ կամ իրենց քիմքին (քէֆին) չյարմարած մէկ երազը լսած ատենները՝ մեր իմաստուն երազ մեկնողները սովորութիւն ունին ըսելու, «Գիշերով երթայ երազը» կըսէր ու բանի տեղ զնեւ չէր տար: Բայց Յովսէփ օրինաւոր կերպով

հարցուած ատենը Յշմարտութիւնը պահել չէր գիտեր. անոր համար ալ էր որ Աստուած իւր խորհրդերդնէրը կայտնէր իրեն: Երբորդ օրը Փարաւոնի ճնած օրին տարեդարձն էր, ուստի մեծ հանդէս եւ ուրախութիւն ընելու հետ էր իւր պալատին մէջ: Միտքը եկան տակառապետն ու մատակարարը. հրաման տրուաւ որ տակառապետը նորէն բերուի՝ իւր առաջին իշխանութեանը մէջ դրուի, իսկ մատակարարը փայտի վրայ կախուի, ինչպէս որ Յովսէփ մեկներ էր անոնց երազները: Բայց տակառապետը մոռցաւ զՅովսէփ ու անոր խօսքը չբրաւ ամենեւին: Եւ զարմանք չէ. մարդուս կոյր անձնասիրութիւնը եւ ցած ապերախութիւնը այնպիսի սովորական պակասութիւն է, մանաւանդ այն յանկարծակի բարեբաղդութեան մը հանդիպողներուն որ աղքատ բարեկամներ կամ խեղճութեան մէջ մնացած բարերարներ ունին, որ եթէ յիշեն իրենց հին բարեկամն ու բարերարը՝ այն ատեն աւելի պէտք է զարմանալ:

Երկու տարի ալ անցնելէն ետեւ, մէկ օր մը Փարաւոն թագաւորը երազ մը տեսաւ՝ զարմանալի պայծառ ու խորհրդաւոր կերպով. այնպէս որ արթննալուն պէս շփոթած՝ հրամայեց որ եգիպտոսի բոլոր երազ մեկնողներն ու իմաստունները առջեւը գան. պատմեց անոնց երազը, մէկն ալ չեղաւ որ մեկնութիւնը տայ: Այն ատենը տակառապետին միտքը եկաւ Յովսէփ. պատմեց Փարաւոնին իրեն ու մատակարարին երազներուն ելածը. Փարաւոն ալ իսկոյն հրամայեց որ Յովսէփը իրեն բերեն: Գնացին հանեցին Յովսէփը բանտէն, վրան գլուխը մաքրեցին, հագուստը փոխեցին, ու առին Փարաւոնի առջեւը հանեցին:

«Ես մէկ երազ մը տեսայ, ըսաւ Փարաւոն, ու մէկը չկայ որ անոր մեկնութիւնը տայ ինձի. բայց քեզի համար ըսին որ ի՛նչ երազ որ լսես՝ կրնաս մեկնել»: Յովսէփ պատասխան տրուաւ թէ «Առանց Աստուծոյ կարելի բան չէ յաջող ու Յշմարտութիւն մը տալ տէրութեանդ երազին»: Փարաւոն նայեցաւ որ Յովսէփայ քովը հպարտութիւն՝ ինքնահաւանութիւն չկայ. սկսաւ իւր երազը պատմել անոր վստահութեամբ. «Տեսիլքիս մէջ այնպէս երեւցաւ ինձի որ իբր թէ նեղոս գետին եզերքը (չային քէնարը) կեցեր եմ. նայիմ որ գետին մէջէն եօծը հատ երինջ՝ այսինքն կէնճ կովեր ելան, ամէնն ալ գէր, ամէնն ալ գեղեցիկ, ու գետին քովը կարածէին: Անոնց ետեւէն ուրիշ եօծը երինջ ալ ելան՝ վատուծ ու գարշելի, որ գնացին գէր երինջներուն վրայ ընկան ու զանոնք կուլ տուին, ու իրենք նոյնպէս վատուծ մնացին: Արթընցայ ու նորէն քուն



եղայ. — Կորէն երազ մը տեսայ որ իբր թէ մէկ փունջ ցորենի վրայ եօթը հաա հասկ՝ այսինքն ցորենի գլուխ կար, եօթն ալ լեցուն ու գեղեցիկ: Անոնք քովէն ուրիշ փունջ մըն ալ ելաւ նոյնպէս եօթը հասկով որ ճուգած ցամքած ու գէշ քամիէ զարնուածի պէս էին. այն եօթը ճուգած հասկերը երկրնցան՝ իրենց քովի լեցուն ու գեղեցիկ հասկերը կուլ տուին: Այս երազներս պատմեցի երազահաններուն, չկրցան մեկնութիւնը գտնել»: Յովսէփ պատասխան տուաւ թէ «Տէր արքայ, քու տեսած երկու երազդ ալ մի եւ նոյն նշանակութիւնն ունին. Աստուած իրեն ընելիքը ասով ուզեց հասկըցընել քեզի: Եօթը գէթ երինջներն ու եօթը լեցուն հասկերը՝ եօթը առատութեան տարի են. եօթը վատուժ երինջներն ու ճուգած հասկերն ալ եօթը տարի սով քաղցածութիւն պիտի լինի, անոր նշան են: Ինչպէս որ ըսի, Աստուած իւր ընելիքը առաջուց հասկըցուցեր է քեզի. այսինքն թէ առաջ եօթը տարի առատութիւն պիտի լինի բոլոր եգիպտոսի մէջ. անկէց ետքն ալ եօթը տարի այնպիսի քաղցածութիւն մը սով մը՝ որ առաջին առատութիւնը մոռցընել պիտի տայ: Ուրեմն նայէ որ իմաստուն ու խոյեմ մարդ մը զնես բոլոր եգիպտոսի վրայ որ ձեռքին տակը գործակալներ իշխաններ ունենայ, անոնք առատութեան տարիներուն մէջ թող բոլոր երկրին բերքերուն հինգերորդ մասը տէրութեան առնուն ու այլ եւ այլ քաղաքներու մէջ պահեն. որով սովին եօթը տարւոյն մէջ ալ երկիրս անօթութենէն չըջարդուի»:

Ետ հաւնեցաւ Փարաւոն Յովսէփայ տուած մեկնութեանն ու խորհրդին: Դարձաւ ըսաւ իւր մարդիկներուն որ «Մի՛թէ դիւրի՞ն բան է այնպիսի մարդ մը գտնել որ Աստուծոյ հոգին անոր վրայ տեսնուի»: Յետոյ Յովսէփայ ըսաւ. «Որովհետեւ քեզի յայտնեց Աստուած բոլոր այդ բաները, քեզիէ իմաստուն քեզիէ խոյեմ մարդ չունիմ ես. դուն պիտի լինիս բոլոր իմ տանս վերակացու, եւ կուգեմ որ ամէն մարդ հնազանդ լինի քու հրամանիդ. եւ ես փայն թագաւորական ամրոտովս վեր պիտի լինիմ քեզմէ»: Զեռքէն մասնին ալ հանեց Փարաւոն՝ Յովսէփայ մատը անցուց, բեհեզէ՛ այսինքն ազնիւ պիւրիւն-ճիւղէ հագուստ հագցուց անոր, վիզն ալ ոսկիէ վզնոց կամ մանեակ անցուց. իրեն երկրորդ կառքը նստեցուց զինքն ու առջեւէն մունետիկ (Թէլլալ) կանչել տուաւ որ բոլոր եգիպտոսի փոխարքայն (վէզիրն) է Յովսէփ. առանց նորա համանին ամենեւին գործ մը չտեսնուի: Յովսէփայ անունը փոխեց, ու

Փսոմփթոմփանէ (կամ Փսուծոմփանէ) դրաւ, որ եգիպտացւոց լեզուովը փրկիչ աշխարհի, կամ ինչպէս ուրիշները կը մեկնեն՝ ծածկագէտ կնշանակէ, եւ Արեգ քաղաքին Պետափրէս քրմին Ասանէթ անունով աղջիկը հարս տուաւ անոր:

Յովսէփ երեսուն տարեկան էր այն փառքին եւ իշխանութեան հասած ատենը: Իսկոյն ելաւ, բոլոր եգիպտոսի երկիրը քալեց «անքէ անցուց. եւ առատութեան տարիներն որ եկան՝ անբաւ անհամար ցորեն ժողովեց դիզեց ամէն քաղաքներուն մէջ: Այն ետե՛ր տարուան միջոցին էր որ երկու մանչ զաւակ ունեցաւ Յովսէփ. մէկուն անունը դրաւ Մանասէ, որ երբայեցերէն մոռացմունք կնշանակէ: Ըսել կուզէր թէ մոռցուց ինծի Աստուած իմ քաջածներս ու հօրս կսկիծները. երկրորդին անունը եփրեմ, այսինքն անու՛մ կամ առատութիւն դրաւ, ըսելով թէ Աստուած իմ գերութեանս ու տառապանացս մէջ անեցուց ու օրհնեց զիս:

Առատութեան ետե՛ր տարին անցնելէն ետեւ, սովին տարիներն եկան կոխեցին եգիպտոս. քաղցածութիւնը տիրեց, ժողովուրդներն ալ աղաղակ վերուցին ու հաց կխնդրէին թագաւորէն: Փարաւոն զամէնքը Յովսէփայ կղըրկէր՝ ըսելով թէ «Յովսէփայ զնացէք, ու ի՛նչ որ ըսէ ձեզի՛ այն ըրէք»: Յովսէփ ալ թագաւորական շտեմարանները բացաւ, ու անկից ցորեն կը ծածխէր բոլոր եգիպտացւոց:

Թէ որ այս պատմութիւնը մեզի պատմողը Աստուածաշունչ սուրբ գիրքը չլինէր. թէ որ իբրեւ հաւատացեալ քրիստոնեայք չգիտնայինք մեք թէ բան մը չպատահիր աշխարհիս երեսը, եւ թէ մէկ գէշ բան մը չկայ որ Աստուած կամեցած ատենը անկից բարիք մը չհանէ, ասոնք շինծու վիպասանութիւններուն (մասալներուն) կարգը պիտի դնէինք: Բայց ոչ, այս պատմութիւնը իրօք պատահած գեղեցիկ խրատներով պատմութիւն է. եւ մեք աւելի ալ պայծառ պիտի տեսնեմք թէ աստուծային նախախնամութիւնն ու արդարութիւնը ի՛նչ կերպով կատարեալ վարձատրութիւն տուաւ այն արդարոյն որ մարդկային անարգ նախանձու զոհ եղած կերեւնար:

76

0023390

2013

